ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳԱՌՆԻԿ ԱԴԴԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.133 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

ՀՀ 0062, ºñ¨³Ý, Üáñ ÜáñùÇ 2-ñ¹ զանգված, ØáÉ¹áí³Ï³Ý 35 Ð»é. 67 49 00, 67 25 42

№ 119 «02» սեպտեմբերի 2022թ.

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ

ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳԱԳԻԿ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարո՛ն Սաֆարյան.

Հայտնում եմ Ձեզ, որ <<Երևանի Գ. Ադդարյանի անվան հ. 133 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ում առաջացել է հայոց լեզու և գրականության ուսուցչի թափուր տեղ:

Կից ներկայացնում եմ հայտարարությունը:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆ՝ /ԲԵԼԱ ԱՂԱՄՅԱՆ

Մրցույթ՝ «Երևանի Գ. Ադդարյանի անվան հ. 133 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականության (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 7-ից մինչև 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022թ. սեպտեմբերի 22-ին՝ ժամը 14:00-ին, Երևանի Գ. Ադդարյանի անվան հ. 133 հիմնական դպրոցում, հասցե՝ Նոր Նորքի 2-րդ զանգված, Մոլդովական 35: Տեղեկությունների համար զանգահարել 010-67-49-00 հեռախոսահամարով: